

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018

11-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով:

Հունիսն էր: Թագուհին իջավ գահավորակից և մտավ կամարակապ սրահը : Սա մի ընդարձակ, բոլորակ սենյակ էր՝ համակ քարաշեն: Նրա աջ ու ահյակ կողմերից բացվում էին խորշավոր դռներ, որոնք տանում էին դեպի դղյակի ներքին հարկերի բաժանմունքները: Դռների մեջտեղից բարձրանում էր որձաքարե լայնադիր սանդուղք, որը յուր վերին մասում բաժանվում էր երկու ճյուղերի. դրանցից մեկը տանում էր դեպի իշխանագուն տիկնաց և օրիորդների կացարանները, իսկ մյուսը՝ դեպի վերին դասիկոնները, ուր ապրում էր թագուհին յուր նաժիշտներով: Սանդուղք-ները ծածկված էին օթոցներով, իսկ լուսավորված կամարներից կախված էին պղնձե կանթեղներ: Թագուհին նաժիշտների օգնությամբ բարձրացավ սանդուղքները և խոտորելով դեպի աջ՝ հասավ ձեղնահարկին, որ լուսավորված էր աշտանակներով: Ձեղունը քարաշեն էր՝ զարդարված վարազի մորթով: Նրա չորս անկյունները պաճուճված էին գույնզգույն քարերով: Պատերի տակ դրված էին բազմոցներ՝ ծածկված դիպակե բարձերով: Թագուհու փափագն էր տեսնել Աշոտ Երկաթին՝ նորից բազմած յուր գահին, քանզի մեռածներն են միայն, որ չեն վերադառնում:

1. Նշե՛ք՝ որ լեզվից է առաջացել **հունիս** ամսանունը. տվե՛ք ծագման մեկնաբանությունը: (3 միավոր)
 2. **Օթոց, կանթեղ, աշտանակ, ձեղուն, պաճուճվել, դասիկոն, դիպակ, համակ բառերի** դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ: (2 միավոր)
 3. Ստուգաբանե՛ք **սանդուղք, իշխանագուն** բառերը: **Իշխանագուն** բառի երկրորդ արմատով գրե՛ք առնվազն երկու բառ: (2 միավոր)
 4. **Բոլորակ** բառի **բոլոր** արմատը ի՞նչ նշանակությամբ է կիրառված: (1 միավոր)
 5. Ելնելով տեքստից՝ նշե՛ք՝ պալատներում ինչպես են կոչվել կին և տղամարդ սպասավորները: (1 միավոր)
 6. Որտեղի՞ց է ծագում «**Մեռածներն են միայն, որ չեն վերադառնում**» թևավոր խոսքը, և երբ է այն կիրառվում: (3 միավոր)
 7. Ի՞նչ է խորհրդանշում **վարազ** կենդանին: Գրե՛ք նրանով բաղադրված երեք անձնանուն: (1 միավոր)
 8. **Աշոտ Երկաթ** բաղադրյալ հատուկ անվան նմանողությամբ գրե՛ք գոյական որոշիչ պարունակող չորս բաղադրյալ անձնանուն: (1 միավոր)
 9. Տեքստից դու՛րս գրեք այն նախադասությունը, որում ենթական արտահայտված է դերբայական դարձվածով: Ընդգծել այն(1 միավոր):
- Բ. Շարադրություն** «**Մենք խաղաղ էինք մեր լեռների պես...**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)